




Յարեանց զինն է 6 Արծաթ Գեորգիե.
Վեցամեայ 31/1
Մեկ ծանուցումը առջին 2 դուրուշ է
Փոստագրութիւնները կանխիկ են:
Մտադրութիւնները ամեն ամսոյ ինն են
Ինն կրկնիկն :

Դուրս երգալիք լրագիրներուն համար
ծախքը առհասոյն վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ ծանուց կամ որ և
իցե գրույրն և միջազգիին պիտի ուղ-
ղուի. եւ ամենց ծախքը ծախքը
կազին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 5 ԳԵՆՏԵՐԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Խաղաղ խորհրդարանն իւր մեծ դու-
ծին այն է սեպտ. 15ի դաշնադրութեան
վրայ խորհրդէն ետեւ ուրիշ նշանաւոր վե-
ճարանութիւն մը չըլլաւ, և ներկայիս
տնն սուղ միջոցն աւարտելու վրայ է:
Իսկ ծերակուտի ժողովն նոյն դաշնադ-
րութեան վրայ ինչ որոշում տարուն լու-
րը թէ և տակաւին չառնուեցաւ, բայց
յատ առնալն երեւութի՝ ծերակոյտն ալ
իւր հաւանութիւնը պիտի տայ, և ի-
տախդ մայրաքաղաքին Պիորէնցա փո-
խադրութիւն արդէն կատարեալ իրողու-
թեան մը կերպարանք կ'առնուի: Թուրքի-
նի ժողովուրդեան ցոյց տուած առաջին հա-
կաւորութիւնը հիմա բոլորովին հան-
դարտութեան փոխուել է. ամեն մարդ
հասկըցած կերակ թէ ս'ըբան փառնա-
ւոր էր Խաղաղ համար Գաղղիոյ առա-
ջարկած նպատակները պայմանները մեր-
ժէ: Թուրքին արդէն համալուեցաւ որ
այսուհետեւ ալ ինքը դաւաճական քա-
ղաք մը պիտի ըլլայ, և թաւորաններուն
վարձակալներն անդամ անցեալ տարուան
վարձքով այս ձեռքս ալ թաւորն փա-
ռելու չեն համարձակիր, փասն զի արքու-
նիքն ու պարտականները քիչ աստեղծ
Պիորէնցայի թաւորաններն երթալու կըս-
պասեն: Առաւելարութիւնն ալ որ ար-
դէն խորհրդարանէն հաճութիւն տուած
և փոխադրութեան համար հարկ եղած
դուանքն ստացած է, կարելի եղածին չափ
դորձելը շուտով աւարտելու և Պիո-
րէնցա երթալու կը փութայ, ուր պիտի
դուանքուն նաեւ նոր խորհրդարանը, ին-
չու որ հիմն իր սահմանադրական ժամա-
նակը լրացուցած ըլլալով՝ պիտի լուծուի
և ընտրութիւնները մայրաքաղաքին փո-
խադրութեանէն ետեւ պիտի սկսին: Վեր-
կայ խորհրդարանը 1859ին դուանքեցաւ,
և իւր կազմութեան միջոցին Խաղաղ իր
միութիւնն սկսաւ ու կատարելադորձեց:
Խորհրդարանին ձեռքն էր՝ Յուրիսի
դաշնադրութենէն ետեւ Խաղաղ մանր
դաշնակից պետութեանց բաժնեկող տկա-
րացընէն, կամ Ալեքս. Բալանուէլի ար-
քունական հաւաքականին ներքեւ միացընե-
լով դորացընէն: Իր ձեռքն էր նմանապէս
սեպտ. 15ի դաշնադրութիւնն ընդունե-
լով միութիւնն առաւելարել, կամ մեր-
ժէով տարազայ արկածներու ձեռքը մատ-
նել զայն: Բայց այս երկու նշանաւոր
պարագայից մէջ ալ, խորհրդարանը ինչ
որ աղբիւն իրապէս օգուտ կընծայէր՝ զայն
ընդունելով՝ մեծ խոհեմութեամբ և հայ-
րենասիրութեամբ փարուեցաւ: Իսկ ներ-
քին բարեկարգութեան նկատմամբ, զան-
ազոց պաշտօնեայ Պ. Սելալի առաջար-
կած միջոցներուն իր հաւանութիւնը տա-
լով, խորհրդարանն Խաղաղ դրամական
փեման ապագայ անանկութենէ մ'աղա-
տեց: Ստոյգ է որ միութիւնը մեծ բա-
րիք մ'երաւ Խաղաղ համար, բայց իւր
դանձալին վեման անհրաժեշտ կործանում
կ'սպասեաւ: « Եւս ընթացողով ուր կեր-
թանք մեք, կրեսր Պ. Սելալ իր սեղե-
կազրին մէջ, մեր եկամուտին նայելով 600
միլիոն Ֆրանք ծախք ընելու էինք, բայց

ծախքերն 900 միլիոնի կը հասնէ: Եւ
կից անգին չերթանք, քանի որ դեռ ժա-
մանակ կայ, փասն զի գանձն այս վարկե-
նիս 317 միլիոն բաց ունի: Եւս բայց
դոշեւու համար Պ. Սելալ արդէն կրկնա-
պատկուած հարկերն աւելցնելու, ան-
շարժ ստացուածոց վրայ դրուած հարկե-
րուն երկու տարեկանը ժողովելու, պաշ-
տօնեայ ամառականները պահեցընելու, ազ-
դային կառուածներն ու երկաթուղիները
փառաւելու առաջարկութիւնները ըրած էր:
Եւս մեծ գոհոյութիւններ էին, և խոր-
հրդարանն անգամ իւր հաւանութիւնը
տալու կը փութայէր, երբ Պիորէնցա քաղաքը
հայրենասիրական եւ աւելարել փառնա-
ւոր բաժնին ինքած անշարժ ստացուածոց
երկամեայ հարկն ինքնին կառավարութեան
ներկայացոյց: Եւս փայ պաշտօնեայ նա-
խագահ Լամբրոմնա դորապետը փութաց
իւր շորհակալութիւնը արեւելացեաց յայտ-
նելու, որոց օրինակին հետեւեցան իսկոյն
Սելան, Սարոյն և Բիւնեմէնի ուրիշ
քաղաքները: Գրամական դաշնութիւն-
ները, զորս Սարոյն իրաւացեայ ա-
մենէն անհաճոյ բանը կը համարէ, և
որուն համար մեք ալ ամեն մարդոց ան-
հաճոյ կըստ մը կրնանք ընել, անհրա-
ցոյց դուապ թէ Խաղաղ ժողովուրդը
ս'ըբան կը սկսէ միութեան դադարաւոր և
իւր կառավարութեան դժուարութիւն-
ները թեթեւցընելու կը ջանայ: Իսկ տե-
րութեան պաշտօնեայ ամառականները, որը
արդէն մեծ բան մը չէին, խորհրդարանին
հաճութեամբ հարկերն չորս պիտի պակ-
սին: Բայց կը յուսացուի որ եթէ խաղա-
ղութիւնը չվազուի, իւր դրամական փե-
մալը բարեկարգընելով Խաղաղ աւելար-
ելութեան օրեր պիտի տեսնէ: Եւս այժմ
տեղութիւնը փոխանակ յեղափոխութիւն-
նը քաջակերելու, Ալեքանդր Նահանգին
մէջ խաղաղութիւն ձգելու աշխատանքն
ինքն ալ խաղաղ կը պատճէ, որով կը հաս-
տատուի Լամբրոմնա դորապետին ըսածը
Պ. Տրուէն ար Լիւիսի դրած պատաս-
խանին մէջ. « Խաղաղ ոչ եթէ սրով,
այլ քաղաքակրթութեան զօրութեամբ
պիտի յառաջ երթայ: Եւս Գիորէն
Նահանգին մէջ Եւստրիա գաղեց ապա-
տանները, և այս կողմէն պատերազմի
հաւանականութիւն մը չնկատելով, կըս-
նանք դուշմնակ իրաւունքը զիպաշ ժամա-
նակ ինքզինքը իրաւունքը զիպաշ ժամա-
նակ մը կը թողու: »

Իրաւ է որ արձարաններու քաղա-
քադէաները նստած տեղերին ուղանալն
պէս շատ անգամ տեղութեանց սահմա-
նադրութեան կը փոխեն, և իրենց ծուխը
քաջած աստեղծ զիւրութեամբ քաղաքա-
կան խնդիրները կը լուծեն: Աւստի զոր-
մանք չէ որ այս պարտններն իրենց բեղմ-
նաւոր երկաթայութեան մէջ Ալեքանդր
խնդրոյն ալ տարրինակ լուծում մ'երա-
ղեն: Եւս մեծ համար ամենապիւրն բան
մ'է օսմանեան հոգին Եւստրիոյ վարձա-
արութիւն մ'ընել, և Ալեքանդր առ-
նելով խաղաղացոց տալ: Եւստրիա գոհ
կըլլայ, կըսեն, Սարոյն-Ալաքիա, Սել-
վիա կամ Էրեսէն աստեղծով. բայց զի-
տե՛ն արդեօք որ թէ և այս երկիրները
մասամբ իւրեք ինքնիշխան կը համարուին,
այսու ամենայն օսմանեան ստացուածք

լրաւէ դադարած չեն: Սելվի թողուց
Փարլի. դաշնադրութեամբ մեծ տեղու-
թեանց ըրած երաշխաւորութիւնը, որոց
մէջ է նաեւ Ալեքս. Բալանուէլի կա-
ռավարութիւնը, որ առանց անկաւ դըռ-
նուելու՝ իր խօսքը չկրնար ետ առնուլ:
Պարլի. է արդեօք որ Բ. Գուռը՝ Ի-
տալիոյ կաթը կատարելու համար՝ ինքնին
Եւստրիոյ հատուցում ընելու երբեք զե-
ջանի: Ալեքանդր դաւաճութիւնն առկա
կաթիլախանայ մէկ երազը կը համարէ:
Հետեւաւոր ողջամիտ հատարակութիւնն
ալ, հարկ չկայ ընելու, այս տեսակ տա-
րածայնութեանց կարեւորութիւն մը չըն-
ծայէր: Եւս իսկ հաւանաբար թիւրք
գորապետը, որ Պարլիպալիսի թիւրքա-
նէրէն մէկն է, մասնաւոր տեղափառ մը
կը հերքէ այս անտեղի զոյցը, որուն ան-
կարելի ըլլալն ալ կապացուցանէ: Աւստի
գործեալ կը կրնանք, Խաղաղ Ալե-
նեալ, ոչ դեպքանախօսութեամբ և ոչ
զինուց դրութեամբ: Իսկ Է. Բոնի խնդ-
րոյն դալով, սեպտ. 15ի դաշնադրու-
թիւնը զինքը կը պարտաւորէ որ սրբա-
ղան Պարլի իր բաղդին թողու, և իր մայ-
րաքաղաքաւորը Պիորէնցա հաստատէ:
Է. Բոնի մէջ հաւանաբարութիւնը կը
տրիւ, և Ս. Պարլի հիմա հիմա դեռ
Գաղղիոյ սուլթաններուն պաշտպանութեան
ներքեւ ապահով, երանելի ճիւղով մը սը-
րոյ կարգը դասելու հանդէսը կամ արա-
րողութիւնը կը կատարէ: Եւս առթիւ
Ս. Պարլի մայր եկեղեցին շքեղապէս
դորադրուած էր, և միլիոնի ու ոսկերի-
կազարէն մէջ կախուած պատկերները՝
նոր Սարոյն գործած հրաշքները կը ներ-
կայացընէին: Գուռէ հետաքրքիր ընթեր-
ցողը հարցունեն թէ ո՞վ է այս նոր Սար-
լը. բայց մեք ալ անոր վրայ մեծ տեղե-
կութիւն մը չունենք, ուստի սրբոց վար-
քին մէջ նոր դրուի մ'ալ աւելցընելու
ջանքը Յիսուսեան հարց կը թողուց:
Սելվի պաշտի կըցանք տեղեկանալ որ նոր
սրբոյն անուրը Պարլիս Սանիստու է, որ
վէշապատներով դարուն մէջ լուսեղա-
կան և կաթիլանկան աղանդաւորներուն
հոգիները դժգոհեցնող աղանդու և զանազ
բռնի արքայութիւն տանելու համար՝ աշ-
խարհի վրայ անանց մարմինները ողջողջ
արեւու շատ մեծ ջանքեր ըրած է:

Գաղղիոյ մէջ՝ արաւքին քաղաքական
խնդիրներու պահտութեան պատճառաւ՝
հատարակայ ուշադրութիւնը ներքին բա-
րեկարգութեանց վրայ դարձած է:
Սելվին գործոց նախորդ պաշտօնեայ
Պ. ար Բէրսինի դուքսը մամոյ աղա-
տութեան նկատմամբ Պ. Է. ար Ժիրար-
տէն շարադրած և իրեն յուզարկած մէկ նոր
գրքին առթիւ նամակ մը գրած էր անոր:
Է. Բոնի նամակը Բոնէս լրագիրն հրատարա-
կեց, և ահա « Ալեք. Բոնի մը համար
շատ աղմուկ » ըսուած առաջն այս պա-
րագրին մէջ ալ ձգըտեցաւ: Եւստրիա
ըստ ինքեան մեծ կարեւորութիւն մը չու-
նի, ոչ ալ անով Գաղղիոյ մէջ մամոյ
գրութիւնն ամբողջելու նշան մը կերակ
տակաւին: այլ միայն սա կը հասկցուի որ
Պ. ար Բէրսինի կարծեք մեծ փոփո-
խութիւն մը կրած է, առաջ մամուլը շատ
վառադաւոր կը համարէր, հիմա ոչինչ կը

համարէ: « Սելվի յեղաշրջումներն այն ա-
տեն կը վերջանան, կրտէ, և կանոնաւոր
պետութիւն մը կ'սկսի, երբ մամուլն Միւլ-
ղեոյ պէս ազատ ըլլալով՝ ամենին մէկու
մ'ալ չմնասեր և ամենուն օգուտ կը մա-
տուցանէ: » Բայց Պ. ար Բէրսինի չը
կարծէր թէ մամոյ ազատութիւնը շնոր-
հելու դեռ ժամանակն եկած ըլլայ: Գաղ-
ղեոյ մէջ, Իսկ « Իրաւունքը մամուլութեան »
անունը գրքին հեղինակ Պ. Է. ար Ժիրար-
տէն կը պատասխանէ թէ մամուլը ոչ ևս
վառադաւոր կըլլայ՝ երբ անոր կատարեալ
ազատութիւն կը տրուի: և Միւլղեոյ, Պել-
ճիքայի ու Եւստրիոյ օրինակներն ասոր
ապացոյց կը լինեն, ուր կառավարութիւն
ները լրացող գրածին ուշադրութիւն չը-
նելով, անանց կարծեք մեծ կարեւորու-
թիւն չառնաւ: Բայց այս վեմարանու-
թիւններն կրնայ յուսացուիլ որ կայսեր
ամենէն հաւատարմ խորհրդականներուն
մէջ ալ պակաս չեն մամոյ վրայ աւելի
մեղմ օրէնք մը դնելու փափաքողներ, և
Պրանս լրագրին ըսածին նայելով, որուն
առաջ տեղեկութիւնները շատ անգամ
հաւատարմ աղբիւրներէ առնուած են,
« Եւստրիոյ կայսեր թէ՛ այս և թէ՛ ուրիշ
բարեկարգութիւններ ընելու դիտաւորու-
թիւնը իրաւ հաւանական է: Եւս բարե-
կարգութեանց մէկն ալ, տեղութեան
պաշտօնեայ Օրէնդարական ժողովն առ-
ջեւ պատասխանատուութիւնը պիտի ըլ-
լայ. փասն զի տեղութեան պաշտօնեայնե-
րն հիմա ուղղակի Պայսեր պատասխանա-
տու են: Իսկ կառավարութեան ընթացքը
շատազօղելու համար, Պ. Պիլլեյի կամ
Պ. Բոնի պէս ճարտասան պաշտօնեայ-
ներ խորհրդարանին մէջ աստեղծաւոր
թիւններ կրնան: Բայց որովհետեւ տա-
կաւին ասոնց բոլորն ալ առաջարկութիւն
ներ են, ուստի չենք ուղեր աւելի երկայն
խօսիլ, և իրական տեղեկութեանց կըս-
պասեն: »

Եւստրիա և Բուստիա Գերմա-
նական դքսութիւնները Տանիմաքայի
ձեռքէն խլելէ ետեւ՝ մէջերն անհա-
մաճախութիւն ծաղած կը թուէր աւա-
րին վրայ: Էլեզվի-Շօլթէյի բնակ-
չաց փափաքն ի սկզբանէ անտի անկախ
պետութիւն մ'ըլլալէր Եւստրիոյն
պուրկի դքսին իշխանութեան ներքեւ, և
Գերմանական դաշնակցութեան աւագա-
ժողովն ալ ասոր համաձայն էր: Բայց հի-
մա խիղիւր փոխուեցաւ. փասն զի Եւստ-
րիա և Բուստիա, այս երկիրները Տանի-
մաքայի թագաւորն ուղղակի իրենց թո-
ղած ըլլալուն համար, խնդրել վերջնական
կերպով կարգի դնելու իրաւունքն ալ ի-
րենց յատկացընելու փորձ կը փորձեն, թէ և
ինչպէս որ ըսինք, իրենք ալ երկուստեք
համաձայն չեն: Եւստրիոյ բայց ի Եւստ-
րիոյն պուրկի դուքսէն՝ Ժամանակութեան
իրաւունք պահանջողներ շատ կան, որոց
զընտարներն են Է. Բոնի իշխանն ու Օւ-
տենպուրի մեծ դուքսը: Բուստիա ալ
այս նպատակաւ հին թուղթեր կը խա-
նէ, որպէս զի դքսութիւններն ուրիշ չը
տարու միջոց մը գտնէ: Զանոյքի և Սար-
տիա, որք երկու մեծ տեղութեանց հետ
Էլեզվի-Շօլթէյի գրաւելու գործա-
կից եղած էին, Պելլիսի արքունեաց կող-

մանէ հրաւեր կընդունին իրենց զօրքերը ետ քաշելու, և կ'ստիպուին հզօրին առջև խոնորհելու: Իսկ Աւստրիոյ դերը տակաւին չիլի յայտնի չէ: Գերմանիոյ զօրքական տերութեանց կողմնէ թէ Ռուսիոյ կողմնէ՝ չգիտցուիր: Բայց Աւստրիոյ կայսրը գործը շուտով վերջացընելու համար Քարտի կոմսը Պէտլին զրկած է գաղտնի հրահանգներով, և կը յուսարուի որ քիչ ատենէն այս կնիւնտ խնդիրն ալ կարգի կը դրուի: «Սոր երկիրներ ձեռք բերելու և Պալմիրի ծովուն վրայ գերեցիկ նստահանգիստներ ունենալու փափաքը կրնայ պահ մը Ռուսիոյ փառասիրութիւնը դրդել: Եւ ասկէն չենք կարծեր որ Գերմանիոյ տերութիւնները ընդ ալ թողուն որ իր ուղածին պէս իւր նպատակն յառաջ տանի: Եւ անհապաճ լաւ ալ ինչ գաղտնի տխրութիւններ կուենայ թող ունենայ, չիրար առանց Գերմանիոյ մէջ իւր ազդեցութիւնը կուսանելու: Ռուսիոյ փառասիրութիւնը դժուար է, որ իր շահերուն ալ դէմէ: Աւստրիոյ այս խնդրին մէջ ալ համագործակցութիւն կ'ունենայ, և վերջապէս Շեզելի Զօրութիւնի բնակչաց ազատ քուէարկութեանը պիտի ձգուի՝ որ իրենց ուղած իշխանն քնտրեն: Կամ եթէ երկուս մեծ տէրութիւններն կամակեցնեն չուզեն, յիշեալ բնակչաց ուղած Աւստրիոյ իրի դուքսն իրենք իրենց ձեռքը անոնց իշխան տարու պիտի հարկադրեն:»

Աւստրիոյ կայսրութիւնը սահմանադրական տերութեանց կարգն անցնելէ ի վեր, տերութեան ստորին խորհրդարանին համար ամեն կողմերէ ընտրուած երեսփոխանները Ս. Բեննա հրահարուած էին խորհրդարանը բացուելուն առթիւ Պրան շիպու Յովսէփ կայսրը խաղաղասիրական ատենադրանութիւնը ժամանակին ծանուցած ենք:

Ինչպէս որ յայտնի է, սահմանադրական ազգայն մէջ սովորութիւն է որ խորհրդարաններն ալ սոյն թաղաւորական ատենադրանութիւններուն պատասխան մը շարադրել կուտան մասնաժողով մը ձեռքը, զոր քուէից առաւելութեամբ ընդունուելով կայսրը կը ներկայացնեն: Եւ այս պատասխաններն ուղերձ կը կուլան: Խորհրդարաններն իրենց ուղերձին մէջ քաղաքականութեան կամ երկրին բարեկարգութեան վերաբերեալ շատ կարեւոր խորհուրդներ կուտան կառավարութեանց, և ասա այս պատճառաւ է որ ուղերձ մը մեծ կարեւորութիւն ունի:

Աւստրիոյ Գերմանիոյն՝ այսինքն անդաւանաբար ժողովին ուղերձն ուրիշ բան չէր, բայց եթէ կայսեր խօսած ձաճին պարզապէս հաւանութիւն մը: Բայց որովհետեւ Գերմանիոյն անդամները տէրութիւնը կանուանէ և ստորին ժողովին անդամներն ալ ժողովուրդը քուէով կ'ընտրեն, ուստի առաջինը միշտ բնականաբար տերութեան քաղաքականութիւնը կը պաշտպանէ, երկրորդն ալ ժողովրդաց իրաւունքը, զորս օրինաւոր և սահմանադրական միջոցներով առաւել ևս բնաբնա կելու կաշխատի: Արդ ստորին խորհրդարանն իր ուղերձին մէջ դժգոհութիւն կը յայտնէ թէ Սահմանադրութիւնը տակաւին Աւստրիոյ կայսրութեան մէջ ընդհանրապէս ի գործ դրուած չէ, և կը յուսայ որ կայսեր կառավարութիւնը ժողովրդաց արդարացի պահանջումները զոհ ընելու համար ազգու միջոցներ ձեռք կառնու: Խորհրդարանը կը փափաքէ ետքը Զուլթարիոյ խորհրդով, և Ամսթարտան Ս. Բեննոյ առաջադրութիւնը դուրսբերել, և իւրաքանչիւր երկրի պէտք եղած բարեկարգութիւններն յառաջ տանելով՝ սահմանադրական պետութեան օգուանները բոլոր Աւստրիոյ ժողովուրդները վայելել: Իսկ ընդհանուր խաղաղութեան վրայ կայսեր խօսած խօսքերուն պատասխանելով, խորհրդարանն ասիւրաւ անհրաժեշտ պայման մը կը համարի հասարակաց բարօրութեան, և կը խնդրէ որ իւր ջանքը միշտ Աւստրիոյ խաղաղութիւնը հաստատ պահելու

նուիրէ: Եւ կը տեսնենք որ խաղաղութիւնն ազգայն հարստութեանն ու բարօրութեանը կառավարութիւն, և մահադատութիւններն կամ սովորութեանը գործածութեան պարագայը բազմակերպ երկրաւորութեան ու արուեստից ծառայելու հետեւ: Երբ կը տեսնենք որ պատերազմը հաղթարաւոր իրարու հետ ոչ անձնական ոչ և ոչ քէն ունեցող անձնաւոր իրարու ձեռքով գերեզման կը ջնջուին՝ երբ կը տեսնենք որ պատերազմի համար ի գործ վաճառուած այնչափ դանձելը՝ բիւրաւոր մարդաց երջանիկութիւնը կրնան յարգարել, անհատն որ Աւստրիոյ խորհրդարանին իւր կառավարութեան մասունցած այս խնամունք խորհուրդը չգիտէր, խորհուրդ մը որ արդէն Աւստրիոյն ամենէն մեծ քաղաքագիտաց ալ փափաքած բանն է: Աւստրիոյ Ռուսիոյ խօսքին անաղով, կամաստրեղը իւր այն վաղեմի հակառակորդին չթողու համար, իր լեզունները խեղճ Տանիմարայի դէմ պատերազմի դրկեց, և այսօր յաղթանակաւ կընդունի դանակը ի Ս. Բեննա, ուր կայսրը շնորհակալութիւն կը յայտնէ իւր արիւնքուն բանակին: Բայց չենք գիտեր թէ ինչ շահեցաւ արդեօք: Խորհրդարանը թէ և գերմանական դքսութեանց Տանիմարայի լուծէն ազատելուն ուրախակից կըլայ, բայց կը խնդրէ կայսերական կառավարութիւնէն որ գերմանական տէրութեանց մէջ տարածայնութեանց առիթ եղող այս վեճը կարգի դնէ: Գրանդիօրթի Աւագաժողովին գործակցութեամբ: Յետոյ խորհրդարանը տերութեան երկմտից խնդրոյն անցնելով, կը խնդրէ որ ելից և մտից մէջ հաւասարութիւն պահուի, և ծախքերը պակսին, որով միայն, կըսեն, կայսրութիւնը կրնայ իւր գործութիւնը հաստատուն պահել:

Ելից և մտից խնդիրները հարեանցի բան մը չեն: Գրանական չքաւորութիւնն է որ շատ անգամ տերութիւնները դէպ ի կործանուած կառավարութիւն: Բայց զրամական վիճակն ուրիշ եղանակաւ չքաւորութեանը, բայց եթէ խնայութեամբ և կարելի եղածին չափ ծախքերը պակսեցընելով: Գաղափարաւոր Աւստրիոյն այսօր ուսան զինեալ խաղաղութեան գրութիւնը շատ սուղ կը նստի: Եւ տերութիւններ կրնանք համարել, որոց ելքը մուտքին հաւասար ըլլալէ հետեւ է: Իտալիոյ վիճակը նկարագրեցինք: Աւստրիա անկեղ աւելի երջանիկ չէ գրանական մասին, և Գաղիա ալ տարուէ տարի իր բացը կը շտաղունէ: Եւ ինչպէս միայն հաւասարեւելիս երկմտեալ մ'ունի: Եւ եթէ Մօրիսկի Բօսթր լազրին բաժնը ստոյգ է, Եւրոպա մօտեքս աւելի խնայութիւններ պիտի ընէ՝ իր պատերազմական պատրաստութեանց ծախքերը նստեցունելով: Եւ եկող տարին դանակաց պաշտօնեաց Պ. Ալբանիսի իրական մեծ կտի գումար մը պիտի աւելցունեն, որով Եւրոպայ ժողովրդեան հարկը քիչ մ'ալ կը թեթեւայ:

Ամերիկայի լուրերը տակաւին խորին անստուգութեան մէջ կը թողուն հաշտութեան յոյսերը: Պ. Լինքոլնի նախագահութիւնը քուէից անհաւար առաւելութեամբ հաստատուեցաւ, և իր ընդհանրութեան նայելով՝ պատերազմն առաւել ևս ստատութեամբ պիտի սկսի: Վան զի իւր վերստին ընտրութիւնն ուրիշ բան չէր նշանակել: Բայց եթէ պաւրագի շարունակութիւն, մինչև որ հարաւ անձնատուր ըլլալու ստիպուի: Պրէմիըր գորապետն իւր բանակն երթալէն առաջ ատենադրանութիւն մը խօսեցաւ ի Ս. Բեննոյ, ուր հաղարէն աւելի տիկնայց և պարաններ վնջը մտիկ ընելու ներկայ էին: Եւստրալիան ընտրութեան վրայ խօսելով՝ սա խօսքերն ըսաւ Պրէմիըր գորապետը, որ հարաւայեցեց կառաղի թշնամի ըլլալուն համար հիւսիսին մէջ մեծ ազդեցութիւն ունի: Եւ Պ. Լինքոլնի ալ ջերմ կուտակիցներէն մէկն է: «Արդ ժամանակ է որ այս խաղաղութեան ժողովրդեան (հարաւայեց) առաջարկներ, եւ դարձելու եւս դարձիք, այս վերջին անգամն է որ

ձեզի կրսենք, գաղաքեցեք կեղծ ուտելէ և մեզի հետ եկէք երկրին պառնդները վայելեցէք: անցեալն էանց և մեր երկիրը մշակեալու որ խաղաղութեամբ պիտի մընայ:» Այս խաղաղութեան հրաւերը բաւական ազդեցութիւն ըրաւ ի Ս. Բեննոյ և նախագահին խաղաղութեան հակամեալ ըլլալու հաւանականութեամբ միւս օրը թղթաղարմին վերագրել 10 0/0 ինկաւ: Բայց դժբաղդաբար այս խօսքերը խաղաղութեան մեծ յոյս մը չէն տար: Զիւստիսիոյ քաղաքականութիւնը կրնանք անել թէ Պրէմիըր գորապետին այս խօսքերուն մէջ պատկերացած է: Հիւսիսայեցեց հաշտութեան հրաւերը չեն զանաւոր հարաւայեց, բայց միայն այն պայմանաւ որ դարձեալ դան իրենց իշխանութեան ներքեւ մանեն, և ամենեւին անոնց անկախութիւնը ծանցել չեն ուզեր:

Այսինքն կրսենք: Եւ ասանկ չընէք, և ինչպէս Պրէմիըր գորապետը կը շարունակէ, մեր վերջին առաջարկութիւնը մերժեք, այսուհետեւ մեք ալ (հիւսիսայեց) ձեր վրայ չպիտի գլծանք և մեր երկրաւորաց պիտի ըսենք: Նկատեցէք արեւակեղ հարաւին սա գերեցիկ դաշտերը, թէ որ անոնք մեր անյիշատաւութիւնը չընդունին, բաժնեցեք ձեր մէջ այս գերեցիկ դաշտերը, որք ձեզի և ձեր ժառանգաց պիտի մնան յաւիտեան:»

Բայց նայինք թէ արդեօք հարաւն ալ այս դուռը առաջարկութիւններն ընդունելու տրամադրութիւն ունի: Պ. Նիքսոնը Տալիսի, հարաւայեցեց նախագահին, Ուշմիտի ազգային ժողովին ուղերձած պատգամախօսութիւնը ամենեւին զիջման նշան մը չցոյց չտար, և «առանց անկախութեան հաշտութիւնն անկարելի է» կըսէ: Եւստրալիոյն պաշտպանելու համար եթէ ձերմաները չքաւեն, սեւերն անգամ զինեալ առաջարկութիւն կընէ՝ պատերազմէն ետեւ անոնց ազատութիւն տալու պայմանաւ: Եւ հարաւայեցեց ինքնիշխանութեան սերն այնքան ստատիկ է, որ այս զոհողութիւնն անգամ յանձն առնելու պատրաստ են: Այս պայմանին առաւել ևս յայտնի կըրենայ՝ հարաւայեցեց, Աւստրալիոյն ներկայացուցիչներուն ձեռքը բոլոր եւրոպական տերութեանց ուղերձած յայտարարութեան մէջ, որով իրենց անկախութեան իրաւունքը պաշտպանելով, և այս ահալին պատերազմին պատճառը հիւսիսայեց վրայ ձերմով կը յարեն: «Թո՛ղ մեր վրայ յարձակելէ դադրին, և պատերազմը կը վերջանայ: Իսկ եթէ բանակցութեան միջոցով կարգի դրու ելիք խնդիրներ կան, արդարութեան և ազնիւ պատրաստութեան ոգով հաւատարմեք մեր հակառակորդաց հետ հաղորդակցութեան մանելու և մեր դատը լուսաւորեալ մարդոց դատարարութեամբ ձգելու պատրաստ ենք:»

Եւրոպայէ, երկու կողմանէ ըսած բոլոր այս խօսքերէն ուրիշ բան չենք կրնար մակարերել, բայց եթէ սա, որ հաւանաւոր անկախութեան հաշտութիւն չպիտի ընդունի, և հիւսիսն ալ անոնց անկախութիւն չտալու համար պատերազմը յառաջ պիտի տանի, և իրաց այս չարագուշակ վիճակը պիտի յարատեւ մնայ: Եւ կամ մէկին զօրութիւնը գլխովին սպառնելով անձնատուր ըլլայ, կամ եթէ ոչ՝ երկուքն ալ արդէն բաժն կուրուստներուն վրայ առաւել մեծամեծ կորուստներն ալ զիջելով ձեռնարկ ըլլալու ստիպուին: Զինակու հիմա պատերազմի աշխոյժ տակաւին թուցած չէ, և ձմեռը վրայ դալէ յառաջ Արանթի գորապետը վերջին փորձ մ'ալ փորձելու կը ձգնի Ուշմիտի վրայ, թէ և տակաւին ստոյգ լուրերը կը պահին: Բայտ ամենայն հաւանականութեան, այս ձմեռ երկուս տեք մեծ պատրաստութիւններ պիտի տեսնուին, և գարնան բացուելուն կարելի է որ պատերազմին վաճառական հարուածը արուի:

Իսկ եւրոպական տէրութիւններն իրենց կատարեալ չեղբորութիւնը կը պահեն, և ինչպէս վերագրեալ յայտարարութեան առթիւ լոյս Ուշմիտի հարաւ

ւային ներկայացուցիչներուն տուած պատասխանէն կըրեն: Եւստրալիա այսուհետեւ ալ պատերազմին սկսելէն ի վեր բռնած դիրքը պիտի բռնէ, այն է անկախութիւն:

Փարիզէն գերեզմանը 3/15 թուով հեռագրաւոր մը կը ծանուցանէ թէ Սպանիոյ կառավարութիւնն Ամերիկայի Սան Տոմինկո կղզոյն ապստամբութիւնը չկրնարով մինչև հիմա դադար, կառավարութեան պաշտօնակցները խորհուրդ տըւեր են թագուհւոյն որ Սան Տոմինկոէն հրաժարի: Թագուհին չէ հաճեր և պատերազմը շարունակել ուզեր է: Ասոր վրայ պաշտօնակցներն ալ հրաժարական տըւեր են:

Լազրիները կրսեն թէ Եւրոպայ կառավարութիւնն իմաց տուեր է Սպանիոյ կառավարութեան, թէ Սան Տոմինկո կղզին ծովու կողմանէ իրապէս պաշարւած չըլլալուն համար, Եւրոպայ կառավարութիւնը պատերազմը կը ձանչէ զոյն և ոչ ապստամբ:

ՊՈՐՍՍՅՈՒ ՊԵՏՏՈՒԱԿԱՆ
ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐ
Փարիզ 15 դեկտ.
Օամ. քոնսուլիւն 47/8 479/16
Օամ. փոխադրութիւն 1865 թ. 550
Օամ. պանքա 670:

Լոնտոն 15 դեկտ.
Միջոցից Պանքան իր դրամադրէր հարկերն 6 ի թուոց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պայտերական հրամանաւ՝
Ա. Խոյնի նախորդ կառավարիչ Ա. Եսեմ. Բաշա փաշան Իզմիրի կուսակալ անուանեցաւ փոխանակ Ա. Եսեմ. Բաշա փաշային, և այս առթիւ Միւշեթութիւն արուեցաւ իրեն:

Պէթիքոյի Ա. Թաղաւորը Լ. Երուրի կարգին մեծ պաշտօնակալութեան պատուանշանը դրկեց Բ. Գրան արտաքին գործոց պաշտօնատան ընդհանուր քարտուղար Ա. Եսեմ. Ս. Ալթոն Եֆէնտիկին: Նոյն կարգին պաշտօնակալութեան պատուանշանը դրկեց արտաքին գործոց պաշտօնատան յիշատակարանաց անօրէն Ա. Եսեմ. Արշուման Եֆէնտիկին, և տապաւնութեան պատուանշանը դրկեց արտաքին գործոց թարգմանատան երկրորդ դուին Մեծ. Վ. Արստան Եֆէնտիկին, Չայեան Իզեդպար Եֆէնտիկին: Ա. Թագահանէ Եֆէնտիկին:

Եւրոպայ շաքաւէն կիրակի լուսնաւ ըզ ըզլըր ժամութիւն միջոցները մալլաւ քաղաքի Մահապետ-Պաշի թաղը բարձրագատիւ Մեծ եպարքոս Պաւա փաշային ապարանքէն հրդեհ եղնելով, երկու ժամու մէջ՝ թէ՛ նոյն հոյալէն ապարանքը և թէ՛ շրջակայ հինգ վեց խանութ պղծեցան:

Բարձրագատիւ Մեծ եպարքոսն և իր ընտանիքն ու մարդիկը կրցան ազատիլ: Բայց տանը կահ կարասին և մինչև անգամ՝ զգեստներն ու զօհարեղէնները բոլորուն ծարակ եղան: Հրդեհն այնպիսի կարգէ դուրս արագութեամբ ապարանքին ամեն կողմը ծարակեր էր, որ Բարձր-Մեծ Եպարքոսին համագրեաններն ու պատուանշաններն անգամ ապաւելու ժամանակ չէր մնացեր:

Նորին բարձրութիւնն ու ընտանիքն Արդարութեան բարձրագոյն ատենի նախագահ Բարձր. Բեւալի փաշային ապարանքը դալին բնակելու:

Կիրակի օրը բոլոր նախարարներն և ամեն ազգաց երեւելիները Նորին բարձրութեան այցելութեան երթալով, իրենց ցաւակցութիւնը և միանգամայն իր և արեւելեան անձերուն ազատութեանը համար ուրախակցութիւններն յայտնեցին:

Կընդ որն իրիկական դէմ օգոստոս-
փառ Խնքնակալը Տորմ Գազէնի Գա-
լտոր կանչելով՝ Կորին բարձրութիւնը
միմիկարեց ու քաջալերեց:

Բարձրագոյն Գոլատ փառային
պատահած այս նիւթական ծանր վնասը
անցեալները կրած դառն կեանքներուն
վրայ աւելնալով, խոր արտաքին իրա-
ւոյթն ու մարտնչութիւնն արտա-
քինեց: Բայց միանգամայն նոր առիթ
մ'ենկաւ օգոստոսի Գայսեր՝ նորին
բարձրութեան վրայ ունեցած սէրն ու հա-
մակրութիւնը գերազանց կերպով մը յայտ-
նելու:

Արովհետեւ բարձրագոյն Գոլատ
փառային այս հրեւեհին մէջ իւր պատուանդ-
շաններուն ու համազգեստներուն հետ
ձառն տէրութեան կնիքը կորուսեր էր, օ-
գոստոսի Խնքնակալն իւր բուն կնիքը
տուաւ անոր, միանգամայն նոր պատուանդ-
շաններ և համազգեստներ շնորհեց: Ը-
ստիցմէ դատ կայսերական արարտէն ալ ըն-
տիր կահեր ու կարասիներ զօժել տուաւ
նորին բարձրութեան: Օտար տէրու-
թեանց դեպքաններն ալ իմանալով որ
Բարձր Գոլատ փառային իրենց տէրու-
թեանց կողմէն ստացած պատուանդան-
ներն ալ կորուսեր է, նորեր բերել տարու-
համար զիւր գրեցին իրենց կառավարու-
թեանց:

Եւս բարձր և ծանաւանդ ընդհա-
նուր ու անկեղծ ցաւակցութեանց ցոյցե-
րը քաջոր միմիկարութիւն մ'են անշուշտ
բարձր Գոլատ փառային, որ իւր լուսա-
ւորեալ հայրենասիրութեամբ, քաղա-
քաշխարհան նշանաւոր տաղանդովը և իւր
մասնուն կառավարութեամբ՝ օգոստոս-
փառ Խնքնակալին փեմ գլխացմանց և
աշխարհաշէն կամաց հաւատարմութադ-
ման և գործաշէն ընկալով, թէ՛ Կորին կայ-
սերական վեհափառութեան և թէ՛ տե-
րութեան ամեն կարգի ժողովրդաց սէրն ու
համակրութիւնը գրաւած է:

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Երուսաղէմայ նորընտիր Պատրի-
արք ամենապատիւ Տ. Եսայի Ս. արքե-
պիսկոպոսն հինգշաբթի առաւուս Կ. Պոլիս
հասաւ Ս. Իշմիւսէն, ուր՝ ինչպէս
յայտնի է՝ եպիսկոպոսական բարձր առ-
աւաններն ընդունելու գացեր էր:

Շողեմաէն ելնելուն, Կորին սրբ-
բազմութիւնը՝ զինքը դիմաւորող բազ-
մաթիւ եկեղեցականաց ուղեկցութեամբ՝
Պաւլոսափութի Մայր եկեղեցին դնաց, ուր
զոհաբանական աղօթքներ ու հողեր եր-
գեր կարողացուցան ի պատիւ Կորին
սրբազնութեան: Եւս եկեղեցիին Պատ-
րիարքարան երթալով՝ այցելութիւն ըրաւ
ամենապատիւ Տ. Պարս սրբազան Պատ-
րիարք հօր, և կէս ժամու ջափ տեսակ-
ցելէ ետեւ՝ Երուսաղէմաւունը դնաց:

Իւրալի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ
նախկին քարոզիչ Երթ. Եւսարոն Միքայի
փարգապետը՝ որ անցեալները Խարբերդու
վիճակին Պատրիարքական փոխանորդ ան-
ուանած էր, Խարբերդու և Չմիկաճաղի
ժողովրդաց խնդրանքը այն երկու վիճա-
կաց առաջնորդ անուանեցու, և գալ շար-
թու ճանրայ պիտի լինէ Խարբերդ երթա-
լու համար:

Գեր. Եւսարոն վարդապետին ուսումը
նախկին եռամիսն ու գործունէութիւն-
նը ծանօթ ըլլալով մեզ, կը սիրենք յուսալ
որ Խարբերդու եւ Չմիկաճաղի հայ ժո-
ղովուրդներն իրենց բարօրութեանն ու
յաւաճապիւնութեանը անձնուէր հովիւ մը
գտած ըլլալով՝ գոհ և հանգիստ կ'ըլլան:

Երբային Երրորդական հոգարարութե-
ան Փրկչի հիւանդանոցին մատու-
կարբութեանը սահմանելու ամսական 20
հազար դուրուշ քանի ամէն ի վեր կա-
նանաւարակէ չլծարած և այս պատճա-

ռաւ հիւանդանոցի մատակարարութիւնը
նեղութեան մէջ ինկած ըլլալով, կը լսենք
թէ հիւանդանոցի հօգարարութեանն
անցեալ ուրիշք որ խնդրադիր մը մա-
տուցեր է Բաղաքական ժողովին, որպէս
զի Սահմանադրութեան 51րդ յօդուածին
արամադրութեանը համեմատ՝ հիւանդա-
նոցի եկամտաց անուսուլութիւնն իրեն յանձ-
նուէր:

Եւսայի օրինաւոր առաջարկութիւն
մը՝ որ Սահմանադրութեան արամադրու-
թեանը վրայ հիմնեալ է, անշուշտ Բա-
ղաքական ժողովը հաւանութիւնը կտա-
նայ, և հիւանդանոցի հոգարարութեան
թոյլ կը տրուի որ իւր վերատեսչութեան
յանձնուած հաստատութեան ինչպէս
ծախքը՝ անանկ ալ եկամուսներն ինքը ար-
տեսէ:

Եւսայի վերոյիշեալ անպատեհու-
թիւնն այսուհետեւ չկրնար նորոգուիլ և
հիւանդանոցի վիճակն ալ մատմը մը կա-
պահովի, ինչպէս որ Սահմանադրութիւնն
ալ իրաւամբ նախատեսած է:

ՊԱՇՏՈՒՄԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Եւսայի առաջ Բաղաքական ժողովը
Պաւլոսայի թշուառ հրկիւնաց ազգովին
օգնութեան հասնելու կարեւորութիւն
տեսնելով յանձնաժողով մը կազմած էր,
որպէս զի անոր միջնորդութեամբ պէտք
եղած նպատակ հաւաքուի:

Եւս անդամ նոյն յանձնաժողովը ան-
դամայն թիւն աւելցնել արժան դատե-
լով, հետեւեալ Մեծ անձինք յանձնա-
ժողովը անդամ որոշուեցան:

- Մեծ Գրեհեան Յակոբ Եփէնտի
« Կարաուղեհան Յակոբ »
« Պաւլոսեան Կարապետ աղա »
« Մէրճանճեան Կարապետ »
« Եփէնտի Կիլիկոս »
« Վափաւաճեան Գեորգ »
« Զրաճեան Սարգիս »

Բաղաքական ժողովն աներկայ վա-
տահութեամբ կը յուսայ որ զԹատիր աղ-
բայինք անկարելի չեն գտնուի յիշեալ
հրկիւնաց թշուառութեանը և պէտք ե-
ղած ձեռնուորութիւնը կը փութան մա-
տուցանել անոնց, երբ սոյն յանձնաժո-
ղովն իրենց մարդասիրութեանը դիմելու
ըլլայ:

4 դեկտեմբեր 1864
Ի. Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

Ս. Փրկչի հիւանդանոցի պատուար-
ժան հոգարարութիւնն հետեւեալ բերի-
րաութիւ լուրը կը հաղորդէ մեզ:

Մեծապատիւ Պետրոս աղա Եւսմ-
օրու հայազգի անուանի վաճառականը,
որ անցեալները Կ. Պոլիս կը դանուէր,
բարեհաճեցաւ 12000 դուրուշ շնորհել
ազգային հիւանդանոցի վարժարանին աղ-
բատի մանկանց գրեթէ Ծախուլ համար:

Եւսայի մեծ առաւանձնութեան մը
մանաւանդ ներկայ նեղ ժամանակին մէջ՝
հաղաւաքու ըլլալով, կը փութանք ի
դիմաց ազգի մեր խորին շնորհակալութիւ-
նը յայտնել մեծապատիւ բարերարին:

ԱԶԳԱՍԷՐ ՀԱՅՈՒՆ

ՈՒՐԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԻՏՄՈՒԹԻՒՆԸ
(Ճարտնակութիւն)

Մոլտավիայ Եւս քաղաքին բազմա-
մարդութեան նայելով՝ հայկազն բնակաց
թիւը խիստ փոքր է. որովհետեւ հայիւ
80 ընտանիք կան, որք իրենց մասնաւոր
փողոցները կամ թաղերը չունին, այլ
խառն ի խառն քաղաքին այլ և այլ կող-
մերը կը բնակին: Մոլտ մեծ մասը վա-
ճառականութեամբ կ'ըլլալին, ոմանք ալ
զիւղերու տէրեր են: Ժողովուրդը առ-
հասարակ տաճիկներ կը խօսի, բայց շատ
գովելի կատարելութիւններ ունի, որով-

հետեւ այս վերջին տարիները ամենքն ալ
սխառ մասնաւոր ու շարքութիւն մը դար-
ձնել իրենց զաւակաց դատարարութեան
վրայ: Եւսայի զաւակաց եկեղեցւոյ խիստ մօտ
են և նախապէս կը համարին իրենց երկրա-
յոց հետ խնամութիւն ընել: Այս է ահա
գլխաւոր պատճառն որ Մոլտավիայ հայ
կողմերը քաջութեամբ դէմ դրին այն
ամենայն հարածանոց և շարքաւանոց զորս
շատ ատեն հասուցին իրենց երկրին բար-
բարոս իշխանները և մոլենախանն պատ-
րիարքները՝ յաւանդաւան կրօնքը չըն-
դունելու համար, և մինչև հիմա ան-
խախտ պահեցին իրենց կրօնքն ու ազգու-
թիւնը: Տէրութիւնը մեծ համարում
ունենալով այժմ հայոց հաւատարմու-
թեան ու գործունէութեան վրայ, զա-
նազան պաշտօններ կուտայ հայ երիտա-
ւարդաց: որով հիմա գրեթէ ամենայն դա-
տաւանաւանդները հայ պաշտօնատարներ
կան:

Եւսայի մէջ մէկ հայոց եկեղեցի կայ,
որ թէ և հոյակապ չէ, այլ իրեն ներքին
և արտաքին գործերն և մանաւանդ սի-
րուն ձեւով շատ երեւելի է, այնպէս որ
Մոլտավիայ անգամ զարմանալով մը գը-
րեցին իրենց օրագիրներուն մէջ այս եկե-
ղեցւոյ վրայ: Կարող մըն ալ կայ որ
բաւական կանոնաւոր է և յորում աշա-
կերտը աղբային լեզուն քիչ շատ սովոր-
էն դատ, մոլտավիկներն և գաղղիկներն լե-
զուններով ևս կը պարսպեն և բարձրա-
գոյն ուսմանց վրայ ալ տեղեկութիւն-
ներ կ'աւանդեն: Բայց զարմանալին և մե-
ղի Հայոց համար ուրախակն այն է
որ երկրորդ մեծ համարում ունին մեր
գաղղիկներուն վրայ, այնպէս որ շատնք ա-
ւելի լաւ կը համարին իրենց օրագրի զա-
տարարութիւնը հայ վարժապետաց յանձ-
նելու քան թէ Մոլտավիացւոց: Բայ խ
ասոր գլխաւոր պատճառն այն է որ Մոլ-
տավիացւոց գաղղիկները գուրկ են ամեն
բարոյականութեան, ինչպէս որ լաւ կա-
րելի է հասկնալ յետագայ խօսքերէն, ու-
րով իմ օրակից բարեկամներն մեզ
մեծարդոյ Պ. Սոգոման Դրանխալեանը,
Եւսայի գաղղիկ տարեկան հարցաքննու-
թեան նկարագրութիւնը կրնէ այսպէս...
« Եւսայի վարժարանին քննութիւններն
աւարտեցան ամօրս սկիզբը (յուլիսի),
բայց ոչ քանի մը ժամու (ինչպէս Պաւլո-
քաղաքի վարժարանին քննութիւնը) այլ
քանի մ'աւուր մէջ, և ոչ նահանգապե-
տի այլ լոկ հասարակաց ուսմանց Պատի-
կարանին կողմէն սահմանուած քննելի մը
ու գեր երկու քննելի ներկայութեամբ,
ևս և յորով Մոլտավիայ ներկայութեամբ
գլխաւոր պատճառ՝ որովհետեւ յորով
ի սոցանէ ունին աղայք յաշակերտութիւն
մեր վարժարանին մէջ, զոր իրենց վարժա-
րաններն կը նախագասեն: 18 օտար աշա-
կերտք ուսանին մեր վարժարանը: Բն-
նութիւնները ընդհանրապէս յոյժ գոհա-
ցուցիւ եղին ամեն նիւթերու մէջ որ բա-
ւական շատ էին: աշակերտաց թիւը 50ի
կը հասնի և վարժապետը, ինչպէս որ ար-
դէն ծանօթ են հրամանագրէն Պ. Խա-
չերես Գարապաշեան դատաւոր բարձրա-
գոյն ուսմանց, Պ. Լուսին Սրբաբաշ-
եան յետ Պ. Խաչերեսի և Եւս. Օւն-
տովեան Տ. Սոսեփան քահանայն դատա-
ւոր կրօնքի վերաբերեալ սկզբնական ուս-
մանց: Քննութիւնները աւարտելէն յե-
տոյ պարզեւարջութիւնն եղի, յորում
պահու վերոյիշեալ քննիչը իւր կատար-
եալ գոհութիւնը յայտնեց համառօտ
բայց վայելուչ ատենաբանութեամբ մի,
ցուցնելով թէ շատոնց գովեստներ կը
լսէր Հայոց վարժարանին վրայ, ուստի և
շատոնց կը փափաքէր քննութեան միայն
ներկայ լինել և անձամբ զաշակերտս քն-
նել: Եւս ալ գիտելու է որ սա Մոլտա-
վիայ աղաքեմեայի բարձրագոյն ուսմանց
դատաւորներէն մէկն է... » Շնորհիւ
է. Պ. քննիչը իրաւունք ունեցեր է զոհ
լինելու գաղղիկ կանոններէն և աշակեր-
տաց ցուցնուած յաւաքութեանն, ու-
րովհետեւ ինքն օտարազգի է և կրցեր է
լաւ գիտել թէ ի՞նչ աստիճանի կարո-
ղութիւն ունին աշակերտք սովորած օտար

լեզուաց և բարձրագոյն ուսմանց մէջ:
Բայց թէ որ Պ. քննիչը հայերէն ևս
գիտնար, ցաւով սրտի պիտի տեսնէր որ
աշակերտք շատ աւելի յաւաքացած են օ-
տար լեզուաց և ուսմանց մէջ՝ քան թէ
իրենց մայրական լեզուին և աղբային գի-
տութեանց մէջ:

Բայց այս տեղ ներքին կը լինի տեղ
թէ մեր ընդհանուր ազգին ժողովրդական
գաղղաց շատերուն մէջ աշակերտք օտար
հոգով կը մեծան, և ամեն տեղ աւելի
տեղեկ են օտար լեզուաց քան թէ հա-
յերէնին: և ինչպէս երբեմն Սոգոման կամ
Կարեկ աւարտող աշակերտք փիլիսոփայ
կը համարուէին, այնպէս ալ հիմա քերա-
կանութիւնը պապկային նման բառ առ բառ
գաղղիկները քաջ հայկաբան կը համար-
ւին իրենց վարժապետներէն: Եւս գը-
լաւոր պատճառը հարկաւ այն է որ նոյն
վարժապետները լաւ ու կարգաւորեալ ու-
սումն առած չեն, այլ իրենց աշխատանո-
քը կրցեր են քերականութեան չոր ու
ցամաք կանոնները գըլխին լեզունը, չե-
կրնալով ամենեւին ի գործ դնելու գա-
նանք: Եւս համար է որ այժմ մեր ժո-
ղովրդեան գաղղիկներէն շատին մէջ խեղճ
աշակերտները ամբողջ տարիներ կանչուեն
քերականութիւնը սովորու, և դարձեալ
բան չգիտեն, դարձեալ դրոց լեզուա-
շարադրութեան մատենագրութիւն մը չեն
կրնար հասկնալ և գտնէ կարճ կարճ շա-
րագրութիւններ ընել: և որ մեծն է քան
զամենայն աշխարհիկ լեզուաւ անգամա-
քուր խօսիլ անգամ չեն կարող, օ՛ր մը
նայ որ կանոնաւոր և հասկանալի նմանի
մը շարադրեն: Եւսպէս ուրեմն Եւսայի
գաղղիկ աշակերտներն ալ տարեկան հար-
ցաքննութեան ժամանակ օտար լեզուաց
մէջ կրցած են քաջ լինելու, իսկ հայե-
րէնի մէջ ոչ այնչափ, որովհետեւ մեծա-
մեծ դժուարութիւններ կան չգիտնելին
հայերէնի մէջ ալ ընելու այն յաւաքադի-
մութիւններն զոր օտար լեզուաց մէջ կը-
նեն: Բայ որովհետեւ իրենց ծնողաց հետ տաճ-
կերէն կը խօսին, և այլն, և այլն: Բայց
յուսալ է որ գաղղիկ պարոն դատաւ-
աց անխնայ աշխատութիւններն իրենց
պատուը պիտի տան: Ժամանակին սպասե-
լու է, նա ամեն բան կրնէ:

Գաղղիկ հոգատարութիւնը, ինչ-
պէս Մոլտավիայ միւս հայաբնակ քաղաք-
ները, Կերդանական կառավարութեան
կամ Եփէնտի յանձնուած է, որ կազ-
մայ է ամեն երեք տարին ժողովրդեան քը-
ւեարկութեամբ ընտրուած յիշխաւագա-
հէ և քանի մը անդամներէ: Սոցա պաշ-
տօնն է եկեղեցւոց պայծառանալուն և
չքերականութեան հոգ տանիլ, և անոնց գը-
մարները տոգոսեք տալով՝ քահանայից
և դատաւորաց ուժիկները հասուցանել,
աղքատաց օգնութիւն ընել, և այլն,
և այլն: Եւսպէս ամեն ջանք ի գործ
կը դնեն Եւսայի Եփէնտի մեծ: Եւսպէս
ներքէն օր յաւաք աւարտելու Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցւոյն նորոգութիւնը, որ
քաղաքիս վերջին անգամ պատահած հը-
դեհին ժամանակ պայքեաւ: Եկեղեցին
արդէն պատրաստուելու վրայ է. անոր
կից քանի մը սենեակ ևս շինել տուին օ-
րիորդաց գաղղի մը բանալու մտքը: Տո-
րակայ չկայ որ նոցա իրենց նպատակին
պիտի հասնին, և պիտի ընդունին ընդհա-
նուր Եւսայի խորին շնորհակալքը այդպի-
սի ազգօգուտ ձեռնարկութիւն մ'ընել-
ուն համար:

Մնացեալը հետեւեալ թուով:

ԴԻՍԿՍԻՆ ԵՒ ԱՌԵՏԻՍԻՍԻՆ

Կոստանդնուպոլիս 4 դեկտ.
Կայսերական կառավարութեան 1864
1865ի երեմից հաշուեցողքը (պիւտժէ)
որ քանի մ'աւանդէ ի վեր պատրաստ-
ւելու վրայ էր, արդէն լինեցած է և քիչ
օրէն պիտի հրատարակուի: և թէպէտ
այն ատեն աւելի ընդարձակ տեղեկու-
թիւններ տալու առիթ կ'ունենանք,
սակայն այժմէն անոր եզրակացութիւնը
վաւերական աղբիւրներէ առնելով մեր ըն-

ճողպակե